ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

20.10.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/51

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 22.09.2017թ. թիվ 03/26-3/17086-17 գրությամբ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06406394) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հովտաշատի համայնքապետարանի 19.09.2017թ. թիվ 207 գրության հիման վրա, 22.09.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>ՀՀ Արարատի մարզի Հովտաշատի համայնքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ Արարատի մարզի Հովտաշատի համայնքապետարանը 19.09.2017թ. թիվ 207 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«21.06.2016թ. N ԱՄՀՀ-ԲԸԱՇՁԲ-16/01 կապալային աշխատանքների գնման պայմանագրի «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից կատարված աշխատանքների արդյունքները ընդունելուց հետո, անձրևի ժամանակ ի հայտ են եկել «Մինի Ֆուտբոլի» դաշտի հարթակի մակերևույթի անհարթություններ և ջրափոսեր:

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն 17.11.2016թ. N 63 գրությամբ հավաստում էր, որ կազմակերպությունը պարտավորվում է եղանակային բարենպաստ ժամանակաշրջանում հնարավորինս սեղմ ժամկետում վերացնել ֆուտբոլի դաշտի մակերևույթի ջրահեռացման հետ կապված առկա թերությունները: Ուստի մինչև 25.05.2017թ. Հովտաշատի համայնքապետարանի կողմից N 97 գրությունն ստանալուց հետո կատարվել է «Մինի Ֆուտբոլի» դաշտի արհեստական խոտածածկույթի քանդման աշխատանքներ, որից հետո մինչ օրս ոչ մի տեսակի աշխատանքներ չեն կատարվել:

Հովտաշատի համայնքապետարանը N 97 գրությամբ սահմանել էր 30 օրացուցային օր ժամկետ թերությունները վերացնելու համար, սակայն սահմանված ժամկետը լրացել է վաղուց, իսկ աշխատանքներ դեռ չեն կատարվում:

Խնդրում ենք Ձեզ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին օրենքով սահմանված կարգով ներառել «Սև ցուցակում»՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում և պարտավորեցնել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին Հովտաշատի համայնքապետարանի բյուջե վճարել օրենքով սահմանված տույժերը և տուգանքները»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Վահրամ Հովհաննիսյանը:

3. «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Ընկերությունը Խորհրդին ուղղված 02.10.2017թ. թիվ 87 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հովտաշատի համայնքապետարանի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև կնքվել է Հովտաշատի համայնքապետարանի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման գնման թիվ «ԱՄՀՀ-ԲԸԱՇՁԲ-16/01» պայմանագիրը:

Վերոնշյալ պայմանագրով Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի թիվ 1 հավելվածում սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Հովտաշատ համայնում մինի ֆուտբոլի դաշտի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք), իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքները և վճարել դրա համար:

Կապալառուն Պայմանագրով սահմանված աշխատանքները կատարել է պատշաճ և ժամանակին՝ վերջինիս արդյունքը հանձնելով Պատվիրատուին:

Պատվիրատուի կողմից աշխատանքների արդյունքները ընդունելուց հետո, անձրևի ժամանակ ի հայտ են եկել «Մինի Ֆուտբոլի» դաշտի հարթակի մակերևույթի անհարթություններ և ջրափոսեր:

Կապալառուն N 63 գրությամբ հավաստել է, որ կազմակերպությունը եղանակային բարենպաստ ժամանակահատվածում հնարավորինս սեղմ ժամկետում կվերացնի մինի ֆուտբոլի դաշտի մակերևույթի ջրահեռացման հետ կապված առկա թերությունները: Նշված գրությունից հետո Կապալառուն ձեռնամուխ է եղել առկա թերությունների վերացմանը և կատարել է մինի ֆուտբոլի դաշտի արհեստական խոտածածկույթի քանդման աշխատանքները:

Պատվիրատուն ՀՀ ֆինանսների փոխնախարար Կ. Թամազյանին ուղղված գրությամբ նշել է, որ Կապալառուն մինչ օրս թերությունների վերացմանն ուղղված ոչ մի տեսակի աշխատանքներ չի կատարել, առկա թերությունները չեն վերացվել, և խնդրել է Կապալառուին՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին օրենքով սահմանված կարգով ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում և պարտավորեցնել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին Հովտաշատի համայնքապետարանի բյուջե վճարել օրենքով սահմանված տույժերը և տուգանքները, սակայն, ինչպես արդեն նշել էինք, Կապալառուն ձեռնամուխ է եղել առկա թերությունների վերացմանը և կատարել է մինի ֆուտբոլի դաշտի արհեստական խոտածածկույթի քանդման աշխատանքները,

ավելին, արդեն իսկ կատարել է թերությունների վերացմանն ուղղված աշխատանքների մեծամասնությունը և չի հրաժարվում դրանք կատարելուց:

Մինչդեռ, եթե Պատվիրատուն հաշվի առներ, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն պարտավորությունները կատարել է և շարունակում է կատարել պատշաճ, կհանգեր այլ եզրահանգման:

Սակայն այդ ամենի արդյունքում խախտվել են «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի իրավունքները»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Լևոն Կիրակոսյանը և Հարություն Մայիլյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/51 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 22.09.2017թ. թիվ 03/26-3/17086-17 գրությունը, Հովտաշատի համայնքապետարանի 19.09.2017թ. թիվ 207 գրությունը, «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի 02.10.2017թ. թիվ 87 գրությունը, Հովտաշատի համայնքապետարանի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 21.06.2016թ. կնքված N ԱՄՀՀ-ԲԸԱՇՁԲ-16/01 ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագիրը, «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի 02.10.2017թ. Հովտաշատի համայնքապետարանին ուղղված թիվ 63 գրությունը, Հովտաշատի համայնքապետարանի 25.05.2017թ. Ընկերությանն ուղղված թիվ 97 գրությունը, Պատվիրատուի կարծիքը և դիրքորոշումը.

Հովտաշատի համայնքապետարանի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 21.06.2016թ. կնքվել է N ԱՄՀՀ-ԲԸԱՇՁԲ-16/01 ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է նույն Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Հովտաշատ համայնքում մինի ֆուտբոլի դաշտի կառուցման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքները և վճարել դրա համար:

Պայմանագրի՝

- 1.3 կետի համաձայն՝ նույն Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է մինչև 2016թ. սեպտեմբերի 30-ը:

- 3.1.5 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

- 3.4.8 կետի համաձայն՝ եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով 26.09.2017թ. Խորհրդում տեղի ունեցած նիստին ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ Հովտաշատի համայնքապետարանի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 21.06.2016թ. կնքված N ԱՄՀՀ-ԲԸԱՇՁԲ-16/01 ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրի արդյունքը Ընկերության կողմից ամբողջովին հանձնվել է, և հանձնման փաստը ֆիքսվել է կողմերի միջև երկկողմանի ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությամբ: Սակայն, կատարված աշխատանքների արդյունքներն ընդունելուց հետո, 2016թ. նոյեմբեր ամսին անձրևների արդյունքում ի հայտ են եկել «Մինի Ֆուտբոլի» դաշտի մակերևույթի անհարթություններ և ջրափոսեր:ՀՏեղի ունեցածի կապակցությամբ Պատվիրատուն դիմել է Ընկերությանը՝ պահանջելով միջոցներ ձեռնարկել՝ Պայմանագրով նախատեսված երաշխիքային ժամկետում ի հայտ եկած աշխատանքների արդյունքի թերությունները վերացնելու ուղղությամբ: «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն 17.11.2017թ. թիվ 63 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ տեղեկացնելով, որ Հովտաշատ

համայնքի տարածքում մինի ֆուտբոլի դաշտի հարթակի բետոնացման աշխատանքների իրականացման ընթացքում ի հայտ են եկել դաշտի բետոնե հարթակի ջրահեռացման հետ կապված խնդիրներ, որոնց շտկումը ներկա եղանակային պայմաններում գտնում է ոչ նպատակահարմար: Նույն գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն Պայմանագրով ստանձնել է ֆուտբոլի դաշտի շահագործման օրվանից սկսած, մեկ տարվա ընթացքում Կապալառուի մեղքով ի հայտ եկած թերությունների վերացման պարտավորությունների կատարումը, և պարտավորվել է հաջորդ տարի, եղանակային բարենպաստ պայմաններում, հնարավորինս սեղմ ժամկետներում վերացնել առկա թերությունները: 25.05.2017թ. Հովտաշատի համայնքապետարանի կողմից N 97 գրությամբ դիմել է Ընկերությանը և հայտնել, որ Պայմանագրի 3.4.8 կետի համաձայն՝ Պայմանագրի կատարման արդյունքի հետ կապված՝ ի հայտ եկած թերությունները վերացնելու համար Հովտաշատի համայքապետարանը սահմանում է 30 օրացուցային օր ժամկետ:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց նաև, որ չնայած Ընկերության կողմից ներկայացված գրավոր հավաստմանը, Հովտաշատի համայնքապետարանի կողմից 25.05.2017թ. N 97 գրությունը ստանալուց հետո Ընկերության կողմից կատարվել են միայն «Մինի Ֆուտբոլի» դաշտի արհեստական խոտածածկույթի քանդման աշխատանքներ, որից հետո մինչ օրս ոչ մի տեսակի աշխատանքներ չեն կատարվել:

Ընկերության ներկայացուցիչը պնդեց, որ բացի մինի ֆուտբոլի դաշտի արհեստական խոտածածկույթի քանդման աշխատանքներից, Ընկերության կողմից արդեն իսկ կատարվել է թերությունների վերացմանն ուղղված աշխատանքների մեծ մասը, և հավաստիացրեց, որ մնացյալ մասը կկատարվի հնարավորինս սեղմ ժամկետում և որպես ասվածի ապացույց՝ Խորհրդին ներկայացրեց նաև «Մինի Ֆուտբոլի» դաշտի թերությունների վերացման աշխատանքների ամփոփ նախահաշիվը, ինչպես նաև կատարված աշխատանքների մասին վկայող լուսանկարները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ

պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 36-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

Կարգի 108-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը, իսկ 109-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Նույն կետում նշված անձը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության և Հովտաշատի համայնքապետարանի միջև կնքված գնման պայմանագով նախատեսված կապալային աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 30.09.2016թ., պայմանագրի արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունվել է, և ընդունման փաստն ամրագրվել է կողմերի միջև երկկողմանի ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությամբ, այսինքն, Ընկերությունն իր կողմից՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունները ողջ ծավալով կատարել է:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Հովտաշատի համայնքապետարանի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 21.06.2016թ. կնքված N ԱՄՀՀ-ԲԸԱՇՁԲ-16/01 ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրով աշխատանքների

կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար երաշխիքային ժամկետ սահմանված չէ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝

- «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;

- «բ» ենթակետի համաձայն՝ եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ;

- «գ» ենթակետի համաձայն՝ եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում որպես ընտրված մասնակից մեկ անգամից ավելի հրաժարվել է պայմանագիր կնքելուց;

- «դ» ենթակետի համաձայն՝ եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում օրենքով նախատեսված կարգով մասնակցի առնչությամբ կայացվել է որոշում գնումների գործընթացում հակամրցակցային վարքագծի՝ հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար;

- «ե» ենթակետի համաձայն՝ երբ առկա է նույն մասի 3-րդ կետով նախատեսված հանգամանքը:

Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված ցուցակը հրապարակում է լիազորված մարմինը: Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումներիբողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ տվյալ դեպքում առկա չէ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված որևէ հիմք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.09.2017թ. «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**